# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Հունիսի 6-ին, կիրակի. - Ա. կիր. զկնի Հոգեգալստեան: Մկիզբն Յարութեան կիւրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Առեն աբեղա Ճնպենյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ես դնեմ զձեռս ի վերայ սորայ եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զապիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ» (Ձեռնադրության Մաշտոց) բնաբանով քարոզ խոսեց:

***Հունիսի 12-ին, շաբաթ. - Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Հունիսի 13-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Հոգեգալստեան: Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Հունիսի 20-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Հոգեգալստեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ջավեն աբեղա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եկայք շինեսցուք Սուրբ զԽորանն լուսոյ» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց:

***Հունիսի 27-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Հոգեգալստեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տաճատ ավագ քահանա Դավիդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը «Եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի, եւ ահա մեծ քան զՍողոմոն է աստ» (Մատթ. ԺԲ 42) բնաբանով քարոզ խոսեց: